* * *

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Ձեզ, Հելլադայի գովուած նրգիչներ,
Ես փառաբանել եմ ուզում նորից.
Ձեր յիշատակում իմ տանջող մըտքեր՝
Ցոգնած առօրեայ ցաւից, հոգսերից՝
Թո՛ղ հանգըստանան գոնէ մի վայրկեան.
Ծանըր է մեր դարն նիւթապաշտութեան։

Ոլիմպ, Ելևսիս, Պանաթէնայոն
Խըմբում էին ձեզ, ողպէս մի կենտրոն.
Եւ համազգային ուրախ տօներին
Հովիտների մէջ՝ շըքեղ ու դալար
Եւ ականակիտ ջըրերի ափին
Հընչում էր սըրինգ, տաւիղ ու քընար.
Եւ նըւագներիդ ներդաշնակութեան
Ձայնակցում էին երգեր ոգելից
Ձեզ երկըրպագու հասարակութեան.
Հընչական քաղցրիկ դայլայլիկներից
Կեանք էին առնում բիւրաւոր սըրտեր,
Եւ ձեզ զարդարում էին դափնիքից
Հիւսուած փառահեղ կանաչ պըսակներ...

Բայց դարեր անցան, և ձեր տաւիղներ
Լըռեցին և խոըթ դարձան մեզ համար.
Այժըմ հառաչանք են մեր նըւագներ,
Վըշտահար սըրտի մըրմունջ ցաւագար։

Էլ չը կան կանաչ պըսակներ դափնեայ,
Որով երգիչներըն հրպարտանան—
Այժըմ սրգաւոր դագաղի վերայ
Նոցա տանում են մինչև գերեզման։
Էլ վարդի միջով չը կայ ճանապարհ,
Էլ ոսկեայ քընար չը կայ մեր ձեռքին—
Փուշ ու տատասկի միջով մեզ համար
Այժըմ ընկած է մեր դըժուար ուղին։